ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2024/100

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2024 թ. N 100

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «**Վանաձորի պետական բժշկական քոլեջ**» **ՊՈԱԿ**
Գործունեության հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Թևոսյան 8
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024թ. փետրվարի 15-ին քննարկեց **«Վանաձորի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի** (այսուհետ՝ ՎՊԲՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	16 հունվարի 2023 թ.
ինքնավերլուծության ներկայացում	10 մայիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում	31.10-03.11 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	12 հունվարի 2024թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	21 փետրվարի 2024թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:
Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 1-ը՝ **«Հետազոտություն և զարգացում»** գնահատվել է անբավարար:
Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Վանաձորի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում

Վանաձորի պետական բժշկական քոլեջն իրականացնում է իր առաքելությանը համապատասխան ՄԿԾ-ներ, որոնք համահունչ են ՈԱԾ-ին: Քոլեջը կրթական ծրագրերն իրականացնելիս առաջնորդվում է պետական կրթական չափորոշիչներով, սակայն չկան մշակված ՄԿԾ-ների մասնագրեր և վերջնարդյունքներ:
Կիրառվում են ուսանողների վերլուծական մտածողությունը, գործնական կարողությունները զարգացնող առաջադրանքներ, առկա են գնահատման գործընթացը կանոնակարգող որոշակի մեխանիզմներ:
Քոլեջի ուսումնաարտադրական և արտադրական պրակտիկաները, գործնական պարապմունքների մի մասն անցկացվում են տարածաշրջանի բուժհաստատություններում, դեղատներում, ատամնատեխնիկական լաբորատորիաներում և կոսմետոլոգիական կենտրոններում:
Դասախոսական կազմի համալրումը իրականացվում է մրցութային կարգով: Քոլեջը հիմնականում ապահովված է դասախոսական կազմով, ունի դասախոսների որոշակի ռեզերվ: Սակայն երկու ՄԿԾ-ներում առկա է հատուկ մասնագիտական մոդուլների դասախոսների պակաս: Քոլեջն ունի սերնդափոխության խնդիր՝ պայմանավորված երիտասարդ կադրերի ներգրավման դժվարությամբ:

Քոլեջում գործում են դասախոսական կազմի աշխատանքների, նրանց կարիքների գնահատման, խրախուսման որոշակի մեխանիզմներ:
Սահմանված է աշխատավարձերի վճարման տարբերակում՝ կախված գիտական աստիճանից և մանկավարժական ստաժից:

Քոլեջն ապահովված է ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային բազայով՝ ուսումնական և լաբորատոր մասնաշենքերով: Սակայն մասնագիտական կաբինետներն ու լաբորատորիաներն ունեն նյութերի և գործիքների թարմացման և համալրման կարիք:
Քոլեջում գործող «Ընտանեկան բժշկության կենտրոն»-ը (համաբուժարան) օգտագործվում է նաև կրթական նպատակներով՝ գործող մասնագիտական կաբինետները հնարավորություն են տալիս համադրել ուսումնական գործընթացն աշխատանքային միջավայրի հետ, բացի այդ ուսանողները և դասախոսները կենտրոնում ստանում են անվճար բժշկական օգնություն:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը***

ՄՈՒՀ-ը միջին մասնագիտական կրթությամբ կադրեր է պատրաստում առողջապահության ոլորտի համար, որոնք հիմնականում համապատասխանում են մարզի առողջապահական կարիքներին: Քոլեջը, հաշվի առնելով ներքին և արտաքին շահակիցների կարծիքները, մշակել է իր առաքելությունն ու նպատակներն արտահայտող ռազմավարական ծրագրերը:
Քոլեջում ստեղծված կառավարման համակարգը հնարավորություն է տալիս ներքին և արտաքին շահակիցներին մասնակցել առաքելության և նպատակների ձևակերպմանն ու իրականացմանը:
Քոլեջն ունի սահմանված պաշտոնների նկարագրեր, որոնք հստակեցնում են աշխատակազմի գործառույթները: Գործում են երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորումներ, ներդրվել է հաշվետվողականության արդյունավետ համակարգ:
ՎՊԲՔ-ն ներդրել է որակի ապահովման ներքին համակարգ, հիմնված հաշվետվողականության վրա, տրամադրել է անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ: Որակի ապահովման գործընթացները կանոնակարգելու նպատակով մշակել և ներդրել է քաղաքականություն և ընթացակարգեր, ինչպես նաև մշակել է Որակի Ձեռնարկ:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը***

ՎՊԲՔ-ում առկա են ուսանողների ընդունելության և հավաքագրման մեխանիզմներ: Կարիերայի կենտրոնի կողմից դիմորդների մասնագիտական կողմնորոշման նպատակով մշակվել են «ՎՊԲՔ-ում ուսուցանվող մասնագիտությունների նկարագրիչներ», որոնք տեղադրվել են քոլեջի ֆեյսբուքյան էջում: Գործում են ուսանողների կրթական կարիքների վերհանման տարբեր մեխանիզմներ: Կարիերայի կենտրոնն ակտիվորեն համագործակցում է գործատուների հետ, աջակցում է ուսանողներին աշխատանքի տեղավորմանը:
ՎՊԲՔ-ում դեռևս սահմանված չեն հետազոտական ոլորտում հետաքրքրություններն ու հավակնությունները, բացակայում են իրականացման հստակ քաղաքականությունը և ընթացակարգերը: Առաջադրանքներում հետազոտական բաղադրիչի կիրառումը դեռևս համընդհանուր բնույթ չի կրում: Հետազոտության որոշակի տարրեր են պարունակում որոշ մոդուլների

շրջանակներում ուսանողներին հանձնարարվող ռեֆերատները, ինքնուրույն աշխատանքները: Քոլեջում առկա են նաև դասախոսների հետազոտական գործունեության մասնավոր օրինակներ:

ՎՊԲՔ-ում առկա է արտաքին և ներքին հաշվետվողականության սահմանված կարգ: Ներքի հաշվետվությունները կազմվում են ըստ պլանավորված և իրականացված աշխատանքների: Սակայն ոչ բոլոր հաշվետվություններն են պարունակում վերլուծական բաղադրիչ, կազմված են քանակական տվյալներից:

ՄՈՒՀ-ն իր 2023-2028 ՌԾ-ում պլանավորել է տեղական և միջազգային կրթական հաստատությունների հետ համագործակցություն, ինչպես նաև ուսանողների և աշխատակիցների օտար լեզուների իմացության բարձրացում: Սակայն դեռևս բավարար չէ միջազգային ծրագրերին մասնակցությունը: Քոլեջը չունի նաև արտաքին կապերի պատասխանատու:

Քոլեջը համագործակցում է հանրապետության միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների, առողջապահական, դեղագործական, հասարակական կազմակերպությունների և կոսմետոլոգիական կենտրոնների հետ: Համագործակցության հուշագիր է կնքվել Փարիզի «Հայդաս» վարժարանի հետ, որի շրջանակներում նախատեսվում են իրականացնել ֆրանսերեն լեզվի առցանց դասընթացներ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Վանաձորի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Հետազոտություն և զարգացում»** ոլորտում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - կարճաժամկետ պլանավորումը ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխանեցմանը,
   - գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական ու քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - բոլոր ՄԿԾ-ների համար մասնագրերի և ակնկալվող վերջնարդյունքների մշակմանը,
   - ՄԿԾ-ներում վերջնարդյունք-դասավանդման - գնահատման մեթոդների փոխկապվածության բարելավմանը,
   - ընտրովի մոդուլների ցանկի վերանայմանը,

- ուսանողների ստեղծագործական, վերլուծական կարողությունները զարգացնող մեխանիզմների ներդրմանը,
- տեղեկատվության տրամադրման, հասանելիության, թափանցիկության և հետադարձ կապի արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդրման անհրաժեշտությանը,
- դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումների իրականացմանը և դրանց պարբերականության ապահովմանը,
- դասախոսների և ուսանողների օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանը,
- որակի ապահովման մեխանիզմների համակարգմանը՝ կանոնակարգելով դրանց կիրառման պարբերականությունը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «Վանաձորի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2024 թ. մարտի 26

ք.Երևան